

«ԿԱՄՈՒՋ» ՈՒՎԿ ՓԲԸ

ՊԱՇՏՈՆԸ
ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ
ՎԱՅԻՆԸ

«Իջևան» մասնաճյուղի վարկային մասնագետ
Լրիվ աշխատաժամանակ
անորոշ ժամկետով
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Իջևան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ Ընկերության «Իջևան» մասնաճյուղի վարկային մասնագետի թափուր պաշտոնը համալրելու նպատակով: Աշխատողի հիմնական գործառույթները ներառում են պոտենցիալ վարկառուներ գտնելու աշխատանքների իրականացում, վարկերի տրամադրում, տրամադրված վարկերի վերադարձելիության ապահովում:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ընկերության ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում,
- Հաճախորդների ներգրավում,
- Վարկատեսակների վաճառք,
- Վարկային գործի կազմում և վարում,
- Պոտենցիալ վարկառուի կողմից ներկայացված փաստաթղթերի փաթեթի ամբողջականության ապահովում,
- Վարկային նախագծերի որակյալ փորձաքննության իրականացում՝ համաձայն Ընկերության ներքին իրավական ակտերի,
- Նոտարական գրասենյակում գրավի պայմանագրերի ձևակերպում /անհրաժեշտությունից ելնելով/,
- Վարկերի նպատակային օգտագործման նկատմամբ հսկողության իրականացում,
- Վարկերի ընթացիկ մոնիթորինգի իրականացում,
- Վարկերի վերադարձելիությանն ուղղված գործընթացների իրականացում,
- Վարկերի պայմանների վերանայման, դատական կարգով բռնագանձման վարույթների հարուցման, վարկերի վերակառուցման կապակցությամբ իրեն վերապահված գործառույթների իրականացում
- Հաշվետվությունների կազմում և ներկայացում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿՎՎՈՐՈՒՄՆԵՐ

- բարձրագույն կրթություն (ցանկալի է տնտեսագիտական կամ ֆինանսական),
- ֆինանսաբանական ոլորտում առնվազն մեկ տարվա աշխատանքային փորձ,
- հանձնարարված առաջադրանքները ժամանակին և պատշաճ որակով կատարելու ունակություն,
- վերլուծելու ունակություն,
- կազմակերպելու և առաջնորդելու ունակություն,
- հաղորդակցման և բանակցություններ վարելու հմտություններ,
- թիմային աշխատանքի հմտություններ,
- լարված իրավիճակում լուծումներ գտնելու ունակություն:
ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐ
- աշխատանքը ենթադրում է աշխատաժամանակի մինչև 80%-ը գրասենյակից դուրս աշխատելու պատրաստակամություն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Համապատասխան որակավորում ունեցող անձանց խնդրում ենք իրենց ինքնակենսագրությունը (CV) հայերեն լեզվով ներկայացնել ՀՀ, Տավուշի մարզ, ք.Իջևան 4001, Աբովյան 5/5 կամ ուղարկել էլեկտրոնային փոստով՝ anahit.manukyan@kamurj.am՝ հստակ նշելով պաշտոնը, որին հավակնում են: